

# Հաշվետվություն ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2013թ-ի աշխատանքների

## 1.Ներածություն

Սույն հաշվետվությունը ընդգրկում է բաժնի կողմից 2013թ ընթացքում կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն: այն կազմված է ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի 305-րդ կետի պահանջներին և ձևաչափին համապատասխան:

## 2.Կազմակերպության ներքին հսկողության գործընթացները

Ներքին աուդիտի ստորաբաժանումը 2013 թ ընթացքում աուդիտորական ուսումնասիրություններ է իրականացրել մարզային ենթակայության 35 կազմակերպություններում և մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության /այսուհետ աուդիտի միավորներ/ բաժնում: Իրականացված ուսումնասիրությունների ընթացքում խարդախության, կաշառակերության, չարաշահումների և վարսնումների դեպքեր չեն արձանագրվել: Մարզպետարանում ներքին հսկողության գործընթացը գրնվում է բավարար վիճակում գործառույթները իրականացվում են *mulberi* համակարգի կիրառմամբ, որը ապահովում է բավարար ներքին հսկողություն: Հաշվապահաան հաշվառումը իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, որը նույնպես ապահովում է գործառույթների պարզաճ ներքին հսկողություն:

Մարզպետարանի ենթակայության կազմակերպություններում առկա են հաճախակի կրկնվող թերություններ, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է ձեռնարկել կոնկրետ գործողություններ: Թերևս բոլոր ՊՈԱԿ-ներում չեն պահպանվել ,, Գնումների մասին ՀՀ օրենքի,, պահանջները, որը արդյունք է համապատասխան կադրերի բացակայության և ՊՈԱԿ-ների ղեկավարների ոչ պարզաճ իրազեկված լինելով, ինչպես նաև գնումների կազմակերպման անհրաժեշտության գործընթացի հազվադեպ առաջանալու հետ: Ուսումնասիրված ՓԲԸ-ներում/ առողջապահական կազմակերպություններ/ արձանագրվել են հաշվապահական հաշվառման ստանդարտներին չհամապատասխանող հաշվապահական ձևակերպումներ, որոնց վերաբերյալ ցույց է տրվել անհրաժեշտ խորհրդատվություն և օժանդակություն դրանց վերացման համար / հումանիտար օգնությունների ձևակերպում, ժամկետանց դեղորայքի դուրս գրում, շահութահարկի և շահաբաժինների հաշվարկ և այլն/: Ընդհանուր առմամբ աուդիտի ենթարկված ՓԲԸ-ը ներում գործառույթները իրականացվում են ներքին հսկողության էլեմենտների կիրառմամբ: Կազմակերպվող գնումների գործընթացը իրականացվում է, չնայած առկա են որոշակի թերացումներ:

### 3. Ներքին աուդիտի ստորաբաժանման կադրողականը

Մարզպետարանի ներքին աուդիտի բաժինը կազմավորվել է 2012թ նոյեմբերին: 2013թ ընթացքում բաժնի բոլոր աշխատողները ստացել են աուդիտորի որակավորում, մասնակցել ՀՀ քաղաքցիական ծառայության խորհրդի կողմից հայտարարված մրցույթին, հաղթող ճանաչվել և նշանակվել պաշտոնների: Չնայած, որ նորմատիվ իրավական ակտերի հիմնական մասը Հայաստանի հանրապետությունում մշակվել են 2012թ-ին, սակայն ներքին աուդիտի գործնական կայացումը սկսվել է 2013թ-ին և գտնվում է կայացման փուլում: Ներքին աուդիտի լիազոր մարմին է համարվում ՀՀ Ֆինանսների նախարարությունը: Աուդիտի ռաքզմավարական ծրագիրը կազմվում է 3/երեք/ փարի ժամկետով, որից էլ առանձնացվում է յուրաքանչյուր փարվա աշխատանքային ծրագիրը: Ծրագրի կազման համար հիմք է հանդիսանում յուրաքանչյուր աուդիտի միավորում իրականացվող գործառույթների ռիսկայնությունը: Բաժնի կողմից կազմված միավորներից զգայուն ռիսկայնության գնահատական է տրվել առողջապահական կազմակերպություններին/թվով 17 հատ/, սոցիալական ծառայությունների փարածքային գրասենյակներին/ թվով 4 հատ/, հատուկ դպրոցներին/ թվով 2 հատ/: Միջին ռիսկայնությամբ են գնահատվել հիմնական և միջնակարգ դպրոցները/թվով միավոր/ մշակութային և սպորտային կազմակերպությունները/ թվով հատ/, ցածր ռիսկայնությամբ գնահատվել են փարրական դպրոցները և մարզպետարանի բաժինները/ 24 միավոր/ : Համաձայն սահմանված կարգի աուդիտորական պլանային ուսումնասիրությունները կատարվում են բարձր ռիսկայինների մոտ ամեն փարի մնացածների մոտ երեք փարին մեկ: 2013թ-ին 2012թ- համեմատ ավել է կատարվել 2 ուսումնասիրություն, սակայն որակական առումով փարբերություններն ավելի զգալի են, ինչը բացատրվում է աուդիտորների որակավորման սիստեմատիկ բարձրացմամբ, իրավական դաշտի իրազեկման ավելացմամբ, աուդիտի ինստիտուտի կայացմամբ: Միաժամանակ ավելացել է յուրաքանչյուր միավորին հարկացված ժամաքանակը, որը պայմանավորված է աուդիտորների կողմից մատուցվող խորհրդատվության ծավալներով:

### 4. Անվտոմիզացիո

2013թ-ին ՀՀ Սյունիքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից պլանավորված էր աուդիտի իրականացում աուդիտի 36 միավորների մոտ, փաստացի իրականացվել է 36 միավորների մոտ: Պլանավորված 2 միավորների մոտ չի իրականացվել /Մեղրու բժշկական կենտրոն և սոցիալական ծառայությունների Մեղրու տարածքային գրասենյակ/: Նշված երկու միավորների աուդիտը կիրականացվի 2014թ-ին: Աուդիտի ենթակա 2 միավորների մոտ 2014թ-ի փոխարեն աուդիտ է իրականացվել 2013թ-ին: Ներքին հսկողության առումով մարզպետարանում գործառույթների հուսալիությունը և արդյունավետությունը բավարար հիմքերի վրա է: Ներդրված է mulberru համակարգը, հաշվապապահական հաշվառման համար ներդրված է „հայկական ծրագրեր,, Ենթակա կազմակերպություններում կիրառվող ներքին հսկողությունը ևս որոշակի հիմքեր ունի՝ շնորհիվ տեղեկատվական տեղնուլոգիաների կիրառման, որոնք հիմնականում ներդրված են առողջապահական կազմակերպություններում / ՓԲԸ-ներում/: Կրթական ՊՈԱԿ-ներում ներքին հսկողության համակարգը գործում է մասամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ցածր հիմքերի վրա է, լիարժեք չի ապահովվում „Գնումների մասին,, ՀՀ օրենքի պահանջները, որը բացատրվում է այդ կազմակերպություններում կատարվող գնումների հազվադեպ լինելով, որակավորված մասնագետների բացակայությամբ,ինչպես նաև տնօրենների իրազեկված չլինելով:

## 5.Եզրակացություններ

Ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվող աշխատանքները առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է՝ 1.լիազոր մարմնի կողմից կազմակերպել շարունակական վերապատրաստումներ, հատկապես առկա <<Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի>> կիրառումն ապահովելու ուղղությամ, որը առավել համակարգված կդարձնի կատարվող աշխատանքները, կբարելավի տեղեկատվության տրամադրումը, հնարավորություն կստեղծի ունենալու տարբեր հարցաշարերի, կրկնվող սխալների, անհրաժեշտ աշխատանքային փաստաթղթերի, ձևաչափեր, շտեմարաններ, ուղեցույցներ:

2.Մարզային ենթակայության ՊՈԱԿ-ների համար գնման գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար նպատակահարմար է մարզպետարանում ստեղծել ստորաբաժանում, որը կկազմակերպի գնման գործընթացը, ինչպես նաև նույն գործառույթը կիրականացնի մարզպետարանի աշխատակազմի համար:

3.Անհրաժեշտ է արտաքին ստուգումներ իրականացնող մարմինների կանոնակարգերում /վերստուգիչ պալատ,ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչություն/ կատարել փոփոխություններ, որտեղ նախատեսվեն ստուգում իրականացնելիս, համագործակցություն տվյալ մարմնի ներքին աուդիտի ստորաբաժանման հետ, մասնակից

դարձնելով ստորաբաժանման աշխատակիցներին, որը ներքին աուդիտորներին կհարստացնի փորձով, ինչպես նաև առավել դյուրին կդարձնի արձանագրված խախտումների վերացումը, կնպաստի ներքին աուդիտորների կողմից վերահսկելի դարձնելու նոյնատիպ խախտումները:

**ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
Ներքին աուդիտի բաժնի պետ**

**Է.Միրզոյան**